«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 42/02

ք. Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ 19.03.2019թ. ժամը 16:30

Համաձայն «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 25.02.2019թ-ին ստացված,քաղաքացի-պարտապան՝Լյուսյա Գյուրջյանի դիմում- բողոքի հետագա ընթացքը ապահովելու նպատակով, քաղաքացի՝ Լյուսյա Ստեփանի Գյուրջյանի սնանկության գործով ժամանակավոր կառավարիչ՝Արամ Խաչատրյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում արծածված հանգամանքների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար՝ ս/թ-ի Մարտի 19-ին,16-00-ին ՝«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստին.

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Դիմումատու քաղաքացի-պարտապան Լյուսյա Գյուրջյանը
Սնանկության գործով կառավարիչ՝Արամ Խաչատրյանը

ՄԱՄՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձնաժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Սնանկության գործով կառավարիչ՝Արամ Խաչատրյանը

Դիմումատու քաղաքացի-պարտապան Լյուսյա Գյուրջյանը պատշաճ ծանուցված էր բայց նիստին անհայտ պատճառնորով իր կամ իր ներկայացուցչի ներկայությունը չէր ապահովել:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝
1.«ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 25.02.2019թ-ին ստացված,քաղաքացի-պարտապան՝Լյուսյա Գյուրջյանի դիմում- բողոքի հետագա ընթացքը ապահովելու նպատակով, քաղաքացի՝ Լյուսյա Ստեփանի Գյուրջյանի սնանկության գործով ժամանակավոր կառավարիչ՝Արամ Խաչատրյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրակա- նացման, բողոքում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

ԼՍԵՑԻՆ-Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը բացեց նիստը և տեղեկացրեց նիստի մասնակիցների վերաբերյալ առ այն,որ դիմումատու քաղաքա- ցի-պարտապան Լյուսյա Գյուրջյանը պատշաճ ծանուցված էր բայց հանձնաժողովի նիստին անհայտ պատճառնորով իր կամ իր ներկայացուցչի ներկայությունը չի ապահովել:
Հանձնաժողովի նախագահն խնդրեց հանձնաժողովի անդամներին հայտնել կարծիք հանձնաժողովի նիստը առանց դիմումատու շարունակելու վերաբերյալ: «ՍԳԿԿ» ԻԿԿ կարգապահական հանձնաժողովի ներկա անդամներից՝ Ռ.Խալաթյանը արտահայտեց իր կարծիքը առ այն,որ եթե դիմումատուն պատշաճ ծանուցվել է հանձնաժողովի նիստի տեղի և ժամի վերաբերյալ և իր ներկայությունը չի ապահովվել,ուստի կարելի է ընդունել,որ նա իր դիմումում նշված փաստական հանգամանքներից և ներկայացված փաստաթղթերից զատ այլ

բան ներկայացնելու չունի և քանի որ քննվելու է սնանկության գործով կառավարչի հարցը ու կառավարիչը ներկա է նիստի, ուստի կարելի է նիստը շարունակել դիմումատուի բացակայությամբ դիմումում նշված փաստական հանգամանքների և ներկայված ապացույցների շրջանակներում:

Մյուս հանձնաժողովի անդամները քննարկեցին առեղծված իրավիճակը և ընդունեցին առաջարկը նիստը սկսել առանց դիմումատուի լսել սնանկության գործով կառավարչի բացատրությունները և հետո անդրադառնալ եզրակացության գալու հնարավորություն-ներին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 4

Դեմ – 0

Չեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. .«ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 25.02.2019թ-ին ստացված,քաղաքացի-պարտապան՝Լյուսյա Գյուրջյանի դիմում- բողոքի հետագա ընթացքը ապահովելու նպատակով, քաղաքացի՝ Լյուսյա Ստեփանի Գյուրջյանի սնանկության գործով ժամանակավոր կառավարիչ՝Արամ Խաչատրյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման, բողոքում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու հարցը և դիմումում նշված փաստական հանգամանքների քննության համար 2019թ-ի Մարտի 19-ին, ժամը 16:00-ին՝ հրավիրված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստը սկսել դիմումատուի՝ Լյուսյա Գյուրջյանի բացակայությամբ:

ԼՍԵՑԻՆ-Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը բացեց նիստը և ներկայացրեց դիմում-բողոքի բովանդակությունը:Իր բացատրությունները ներկայացնելու համար ձայնի իրավունք տվեց քաղաքացի Լյուսյա Ստեփանի Գյուրջյանի սնանկության գործով ժամանակավոր կառավարիչ՝Արամ Խաչատրյանին,ով ներկայացրեց իր գրավոր բացատրություն,մասնավորապես շեշտեց,որ դիմում նշված դատական նիստին մասնակից է դարձել որպես սնանկության գործով ժամանակավոր կառավարիչ և ծանուցմամբ հրավիրվել է նիստին դատարանի կողմից,իսկ նիստի ժամանակ պարտապանին ուղղված հարցերը առաջացել են այն բանից հետո երբ պարտապան Լյուսյա Ստեփանի Գյուրջյանը հերքում էր իր կողմից փոխառություն վերցնելու փաստը:Հարցերի միջոցով փորձել եմ պարզաբանումներ մտցնել այդ հանգամանքի քննության ընթացքի մեջ,որը իմ կարծիքով էական հարց է քանի որ կարող է հանդիսանալ պարտավորության հիմք:Հիշատակված դատական նիստի ժամանակ նախագահող դատավորի կողմից ստանալով ցուցում հարցերի պատասխանները ստանալ այլ կերպ,հետագայում 04.03.2019թ-ին գրավոր կարգով դիմել պարտապանին այդ հարցերի պատասխանների ակնկալմամբ,որը հետագայում կարող է օգտագործվել նույն պարտապանի շահերի էֆեկտիվ պաշպանության համար:

Հանձնաժողովի անդամ՝Ա.Ադամյանը հարց ուղղեց ժամանակավոր կառավարչին առ այն թե ինքը ներկայումս զբաղվում է փաստաբանական պրակտիկայով և ներկայացնում կամ ներկայացրել է սնանկության դիմումատուների շահերը :

Ժամանակվոր կառավարիչը պատասխանեց,որ երբևէ չի ներկայացրել նրանց շահերը բայց նրանց հետ ծանոթ է անձամբ:

Հանձնաժողովի անդամները հարցեր ուղղեցին ժամանակավոր կառավարչին,ստացան դրանց պատասխանները,քննարկեցին պատասխանները,ներկայացված փաստաթղթերը և հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյանը հայտնեց այն կարծիքը,որ լսելով ժամանակավոր կառավարչին ուսումնասիրելով ներկայացված փաստական հանգամանքները հասկանալի,որ և ժամանակավոր կառավարչը և դիմումատուն իրենց հանգամանքների նշումներում ի նկատի են ունեցել սնանկության գործով կառավարչի իրավունքները և պարտակունությունները որոնք շատ ավելին են քան ժամանակավոր կառավարչի

լիացորությունները:Հանձնաժողովի նախագահն պարզաբանեց որ այն բոլոր հոդվածներն ու կետերը որոնք նշված են դիմումում վերաբերվելի են սնանկության գործով կառավարչին և սնանկության գործով ժամանակավոր կառավարիչը չէր կարող դրանք խախտել կամ թերանար դրանց կատարման մեջ: Հանձնաժողովի նախագահն առաջարկեց կարճել կարգապահական վարույթը ժամանակավոր կառավարչի կողմից կարգապահական խախտումներ չկատարելու պատճառաբանությամբ:

Հանձնաժողովի անդամ՝Հ.Մարտիկյանը համաձայնելով այդ մտքի հետ նշելով որ դիմումին կցված միակ ապացույցը դա ներկայացված դիմումում դիմումատուների կողմից՝ սնանկության գործով ժամանակվոր կառավարչին փաստաբանի հետ շփոթելու փաստն է,որը ըստ էության Ա.Կարապետյանի վարած գործունեությունների արդյունքն է,որը իրականում կարող էր շփոթության մեջ գցել կողմերին,որը և տեղի է ունեցել:

Հանձնաժողովի անդամը առաջարկեց մի միջնորդել «ՍԳԿԿ» ԻԿԿ Դիտորդ Խորհրդին հորդորել սնանկության գործով կառավարչին հետագայում իր մասնագիտական գործունեությունը կազմակերպել ի նպաստ՝.«ՍԳԿԿ» ԻԿԿ-ի և կառավարիչների նկատմամբ վստահության ձևավորմանը:

Հանձնաժողովի մյուս անդամները համակարծիք եղան առաջարկներին և քվերկեցին՝

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 4

Դեմ – 0

Չեռնպահ – 0

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՝

1.«ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 25.02.2019թ-ին ստացված,քաղաքացի-պարտապան՝Լյուսյա Գյուրջյանի դիմում- բողոքի հետագա ընթացքը ապահովելու նպատակով, քաղաքացի՝ Լյուսյա Ստեփանի Գյուրջյանի սնանկության գործով ժամանակավոր կառավարիչ՝Արամ Խաչատրյանի գործողությունների /անգործության/, դիմումում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ հարուցված կարգապահական վարույթը կարճել:

Միջնորդել «ՍԳԿԿ» ԻԿԿ Դիտորդ Խորհրդին հորդորել սնանկության գործով կառավարչին հետագայում իր մասնագիտական գործունեությունը կազմակերպել ի նպաստ՝.«ՍԳԿԿ» ԻԿԿ-ի և կառավարիչների նկատմամբ վստահության ձևավորմանը:

2.Սույն Եզրակացությունը սահմանված ժամկետում ներկայացնել Դիտորդ Խորհրդին՝ հետագա որոշում կայացնելու նկատառումով:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Ադամյան

Հանձնաժողովի անդամ՝ Հ.Մարտիկյան

Հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյան